ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

23 հունիսի երեքշաբթի 2026
տպագրության ԺԵ տարի

80
(3289)

100 դրամ

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՀԻՆԳ ՀԱՐՅՈՒՐ ԵՎՐՈՅԻ ԶԳԵՍՏ

ՀՀ առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանի հերթական լուսանկարը կրկին քննարկման առիթ է դարձել: Լուսանկարում երեւացող սեւ զգեստը համընկնում է Max Mara Studio Papaia cady dress մոդելի հետ, որի վաճառքի գինը ներկայացված է 499 եվրո: Այսինքն՝ միայն մեկ զգեստի արժեքը մոտավորապես 215-220 հազար դրամ է՝ կախված փոխարժեքից: Համեմատության համար՝ Հայաստանում 2024 թվականի աղքատության միջին շեմը, ըստ վիճակագրական կոմիտեի, կազմել է ամսական 53,420 դրամ, իսկ աղքատության մակարդակը՝ 21.7%: Այլ աղբյուրներով, ՀՀ-ում 2025-ին շուրջ 560.000 թերսնված մարդ կա: Ստացվում է՝ մեկ զգեստի արժեքը հավասար է մոտ 4 ամսվա աղքատության շեմին գտնվողների ամսական ծախսին: Այլ կերպ ասած՝ այն գումարը, որով մեկ պաշտոնյա գնում է մեկ զգեստ, աղքատության շեմին մոտ ապրող քաղաքացին պետք է բաշխի սննդի, դեղի, կոմունալների եւ կենցաղային նվազագույն կարիքների վրա՝ մի քանի ամիս շարունակ:

Ի դեպ, սա առաջին դեպքը չէ, երբ նախարարի հագուստն ու աքսեսուարները հայտնվում են հանրային ուշադրության կենտրոնում: ArmLur.am-ի եւ «Ժողովուրդ» օրաթերթի հրապարակման համաձայն՝ նախարարի կերպարում նախկինում նկատվել են նաեւ HermՈs Kelly 18 belt գոտի՝ 1375 դոլար արժեքով, շուրջ 3132 դոլար արժողությամբ պայուսակ, ինչպես նաեւ այլ բրենդային աքսեսուարներ: Միայն 3132 դոլարանոց պայուսակը՝ մոտ 1.2 միլիոն դրամ, համարժեք է շուրջ 22-23 ամսվա աղքատության շեմին գտնվողների եկամուտին:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում

Թեեւ հունիսի 7-ի խորհրդարանական ընտրությունների արդյունքները ընդդիմադիր ուժերի եւ «ընդդիմափոխության» օրակարգով ընտրություններին մասնակցած ընդհանուր յոթ քաղաքական ուժերի կողմից բողոքարկվել են, քաղաքական դաշտում շարունակում է բաց մնալ հիմնական հարցը՝ ի վերջո, ընդդիմությունը կվերցնի՞ Ազգային Ժողովի մանդատները, կմասնակցի՞ նոր խորհրդարանի ձեւավորմանը, թե՞ կհրաժարվի դրանցից: Մինչ Սահմանադրական դատարանում շարունակվում են ընտրությունների արդյունքների վիճարկման գործընթացները, ընդդիմադիր ճամբարում արդեն քննարկումներ են ընթանում հետագա քայլերի շուրջ: «Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ ընդդիմադիր շրջանակներում առավել հակված են այն տարբերակին, որ ընտրված ուժերը, ի վերջո, կվերցնեն իրենց հասանելիք մանդատները եւ կներգրավվեն խորհրդարանական աշխատանքներին: Մեր աղբյուրների փոխանցմամբ՝ նույնիսկ քննարկումների ոչ պաշտոնական մակարդակում շրջանառվում են ապագա խորհրդարանական պաշտոնների վերաբերյալ տարբեր սցենարներ: Մասնավորապես, որպես ԱԺ փոխխոսնակի հավանական թեկնածու հիշատակվում է «Ուժեղ Հայաստան»-ի ցուցակով պատգամավոր ընտրված Էդգար Ղազարյանի անունը: «Ժողովուրդ» օրաթերթը թեմայի վերաբերյալ զրուցեց հենց Էդգար Ղազարյանի հետ: Վերջինս, սակայն, վստահեցրեց, թե այս փուլում նման հարց օրակարգում չկա:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում

Բարձրագույն դատական խորհրդում ուշագրավ իրավիճակ է ձեւավորվել: Դատելով վերջին զարգացումներից՝ ԲԴԽ գիտնական անդամների զգալի մասը ոչ միայն չի կիսում խորհրդի նախագահի Արթուր Աթաբեկյանի մոտեցումները, այլեւ դատական համակարգում շրջանառվող տեղեկությունների համաձայն՝ որոշ դեպքերում բացահայտ հակադրվում է նրան: Դատական համակարգում վաղուց խոսակցություններ են շրջանառվում, որ ԲԴԽ գիտնական եւ դատավոր անդամների հարաբերությունները հեռու են ներդաշնակ լինելուց: Ըստ այդ տեղեկությունների՝ երկու խմբերի միջեւ առկա տարաձայնություններն ու լարվածությունը ժամանակ առ ժամանակ արտացոլվում են ոչ միայն ներքին քննարկումներում, այլեւ խորհրդի որոշումներում եւ հրապարակային գործունեության մեջ: Վերջին օրինակներից մեկը վերաբերում է Վերաքննիչ քրեական դատարանի դատավոր Ռոբերտ Պապոյանին: ՀՀ արդարադատության նախարար Սրբուհի Գալյանը սկզբում միջնորդություն էր ներկայացրել Բարձրագույն դատական խորհուրդ՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցով: Սակայն հետագայում ի հայտ եկած հանգամանքների հիման վրա նախարարությունը նոր միջնորդություն է ներկայացրել՝ առաջարկելով մերժել հենց նույն կարգապահական վարույթի շրջանակում ներկայացված դիմումը:

Մանրամասները՝ ArmLur.am կայքում

«Ժողովուրդ» օրաթերթը ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից կնքված վերջին պայմանագրերը եւ ուշագրավ փաստեր արձանագրել: Պարզվում է՝ երկրի գլխավոր ֆինանսական գերատեսչությունը, որը կոչված է մշակելու եւ իրականացնելու պետական ֆինանսական քաղաքականությունը, սեփական կարիքների համար միլիոնավոր դրամների խորհրդատվական ծառայություններ է ձեռք բերում արտաքին մասնագետներից: Խոսքը վերաբերում է 2026 թվականի հունիսի 10-ին կնքված պայմանագրերին, որոնք առնչվում են Կառավարության ֆինանսների կառավարման տեղեկատվական համակարգի կառավարման (ԿՖԿՏՀ) ծրագրին: Մասնավորապես, նախարարությունը ՀՀ քաղաքացի Լուսինե Միքայելյանի հետ այս տարվա հունիսի 4-ին կնքել է 4 մլն 40 հազար դրամ արժողությամբ պայմանագիր՝ ֆինանսական մասնագետի խորհրդատվական ծառայությունների մատուցման համար: Պայմանագրում, մասնավորապես, նշված է. «Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ՀՀ ֆինանսների նախարարության կարիքների համար՝ «Հայաստանի Հանրապետության եւ Եվրասիական զարգացման բանկի միջեւ «Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների որակի բարձրացում» ծրագրի ֆինանսավորման համար Կայունացման եւ զարգացման եվրասիական հիմնադրամի միջոցներից դրամաշնորհի տրամադրման մասին համաձայնագրի շրջանակներում Կառավարության ֆինանսների կառավարման տեղեկատվական համակարգի կառավարման (ԿՖԿՏՀ) ծրագրի ֆինանսական մասնագետի խորհրդատվական ծառայությունների մատուցման պարտավորությունը»:

Մանրամասները՝ ArmLur.am կայքում

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

«ՑԱՆԿԱՆՈՒՄ ԵՄ, ՈՐ ԵՐԿՐՈՒՄ ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ ՏԻՐԻ»

ArmLur.am-ը զրուցել է բռնցքամարտի աշխարհի չեմպիոն (ԽՍՀՄ), սպորտի վաստակավոր վարպետ Իսրայել Հակոբկոխյանի հետ:

- Նախորդ իշխանությունների ժամանակ նույնպես հացադուլներ եւ նստացույցեր էիք իրականացնում՝ պահանջելով արդարություն եւ օրինականություն: Այսօր կրկին հացադուլ եք անում: Ի՞նչ ակնկալիք ունեք:

- Երբ անարդարություն եմ տեսնում, պարտադիր պետք է իմ բողոքը արտահայտեմ: Իմ նպատակն է համախմբել մարդկանց, հատկապես քաղաքական ուժերի առաջնորդներին, որպեսզի նրանք հստակ քայլեր առաջարկեն, իսկ իմ նման մարդիկ աջակցեն այդ պայքարին: Ցանկանում եմ, որ երկրում արդարություն տիրի, ոչ թե մարդիկ խաբեբաների զոհ դառնան:

- Նախկինում Ձեր նստացույցերն ու հացադուլները ի՞նչ արդյունք տվեցին:

- Չեմ ասի, որ մեծ հաջողությունների հասա, բայց տեսա շատ մարդկանց, ովքեր ճշմարտության կողմնակից են: Յուրաքանչյուր մարդ իր «ճիշտն» ունի, բայց ճշմարտությունը մեկն է: Ինձ համար կարեւոր է տեսնել մարդկանց, ովքեր անկեղծորեն պայքարում են ճշմարտության համար:

- Ձեր որդին քննում էր Սուրբ Աննա եկեղեցու միջադեպի գործը, որից հետո ազատվեց աշխատանքից: Ի՞նչ է տեղի ունեցել:

- Որդուս առաջին իսկ օրվանից փորձել են հեռացնել համակարգից: Նա գերազանցությամբ ավարտել է ուսումը, աշխատել է բարեխղճորեն, բայց մշտապես բախվել է ճնշումների: Վերջին դեպքի ժամանակ, երբ խուզարկության ընթացքում որեւէ ապօրինի բան չէր հայտնաբերել եւ այդ մասին հայտնել էր լրագրողներին, նրան կրկին ճնշել են եւ առաջարկել հեռանալ աշխատանքից:

- Երեկվանից հացադուլ եք իրականացնում Կենտրոնական ընտրական հանձնաժողովի մոտ: Որեւէ պաշտոնյա մոտեցե՞լ է Ձեզ:

- Ո՛չ, որեւէ մեկը չի մոտեցել: Բայց ես էլ չեմ պատկերացնում՝ ինչ պետք է գան եւ ասեն: Եթե ճշմարտությունը չեն ցանկանում բարձրաձայնել, ապա նրանց խոսքերը որեւէ նշանակություն չունեն:

- Վերջին օրերին քննարկվում է նաեւ Ձեր հագած շապիկը, որի վրա Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինի պատկերն է: Ինչո՞վ է դա պայմանավորված:

- Ես ուժեղ մարդկանց միշտ հարգել եմ: Խոսքը Պուտինի երկրպագու լինելու մասին չէ: Ես ուզում եմ Հայաստանում տեսնել առաջնորդ, որը իր խոսքի տերը կլինի, որը պատասխանատվություն կկրի իր ասածի համար եւ չի խաբի ժողովրդին: Ինձ համար կարեւոր է ուժեղ եւ պատասխանատու ղեկավարի օրինակը:

- Ի՞նչ ուղերձ ունեք ժողովրդին:

- Մաղթում եմ ուժ եւ համբերություն իմ ժողովրդին: Ցանկանում եմ ծառայել ազգիս, աջակցել մարդկանց եւ տեսնել Հայաստանը ավելի ուժեղ ու արդար: Իմ ամենամեծ պարգեւը կլինի տեսնել, որ ժողովուրդը ապրում է արժանապատիվ եւ արդար երկրում:

Իսրայել Հակոբկոխյանի եզրափակիչ խոսքը.

«Ջորություն՝ իմ բազկին, որ ծառայեմ ազգին,
իսկ վերջում թող իմ գլխով գա ու անցնի:
Սահմանել է ինչ-որ Աստված՝ թող կատարվի,
անցնի ամեն ինչ, ու չմնա սիրտս կիսված:
Ձեզ առավել տեսնեմ ուրախ, բազմապատկված թե՛ փառք, թե՛ գանձ,
իսկ իմ պարգեւն այս է՝ օգնել իմ տառապած ազգին»:

Զրուցեց՝ ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆԸ

ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ՔԱՆԴՄԱՆ ԼՈՒՐԸ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՉԷ

«Արցախի՝ «Մենք ենք մեր սարերը» հուշարձանի քանդման մասին լուրը հաստատված չէ. հորդորում ենք չտարածել»: Այս մասին տեղեկանում ենք Արցախի մշակութային ժառանգության օմբուդսմենի գրասենյակի եւ Արցախի Մշակութային եւ զբոսաշրջության զարգացման գործակալության հայտարարությունից:

Սոցիալական ցանցերում լայն տարածում է գտել մի լուսանկար, որի վերաբերյալ տարածվում են պնդումներ, թե ադրբեջանական օկուպացիոն ուժերը շինարարական տեխնիկայի կիրառմամբ ժամանակավորապես բռնազավթված Ստեփանակերտում քանդում են Արցախի գլխավոր խորհրդանիշներից մեկը՝ «Մենք ենք մեր սարերը» հուշարձանը: Այս պահի դրությամբ նշված տեղեկությունը չի հաստատվել: Լուսանկարի իսկությունը, դրա ստեղծման ժամանակը, վայրը, ինչպես նաեւ ներկայացված իրադարձության համապատասխանությունը իրականությանը գտնվում են ստուգման փուլում: Արցախի մշակութային ժառանգության օմբուդսմենի գրասենյակը ու Արցախի Մշակութային եւ զբոսաշրջության զարգացման գործակալությունը հորդորում են հայրենակիցներին, զանգվածային լրատվության միջոցներին, հասարակական կազմակերպություններին եւ սոցիալական ցանցերի օգտատերերին զերծ մնալ չստուգված տեղեկությունների տարածումից եւ սպասել պաշտոնական հաստատված տեղեկատվությանը:

Նման բնույթի հրապարակումները, հատկապես երբ վերաբերում են ազգային ինքնության եւ մշակութային ժառանգության առանցքային խորհրդանիշներին, կարող են լուրջ հոգեբանական ազդեցություն ունենալ բռնի տեղահանված արցախահայության եւ ողջ հայ հասարակության վրա՝ խորացնելով անհանգստությունը, ցավն ու տեղեկատվական անորոշությունը:

Միեւնույն ժամանակ, հատուկ ընդգծում ենք, որ նման չստուգված տեղեկությունների տարածումը կարող է վտանգներ ստեղծել նաեւ հենց մշակութային ժառանգության օբյեկտների համար: Չհաստատված հրապարակումները կարող են անհարկի ուշադրություն հրավիրել տվյալ հուշարձանի կամ մշակութային արժեքի վրա եւ որոշ դեպքերում նպաստել դրա նկատմամբ հետագա վանդալիզմի, վնասման կամ ոչնչացման ռիսկերի մեծացմանը: Հետեւաբար մշակութային ժառանգությանը վերաբերող յուրաքանչյուր տեղեկություն պետք է հրապարակվի բացառապես փաստերի բազմակողմանի ստուգումից հետո՝ հիմնվելով հավաստի ապացույցների, այդ թվում՝ արբանյակային պատկերների, լուսանկարների եւ այլ վստահելի աղբյուրների վրա:

Ցավոք, վերջին շրջանում նման զգայուն թեմաները հաճախ օգտագործվում են դիտումների, տարածումների եւ հանրային արձագանքի արհեստական աճ ապահովելու նպատակով, ինչը հակասում է պատասխանատու տեղեկատվական գործունեության, մասնագիտական էթիկայի եւ հանրային շահի սկզբունքներին: Տվյալ տեղեկությունն այս պահին մանրակրկիտ ուսումնասիրվում եւ ստուգվում է Արցախի մշակութային ժառանգության օմբուդսմենի գրասենյակի ու Արցախի Մշակութային եւ զբոսաշրջության զարգացման գործակալության կողմից: Ստուգման ավարտից հետո, ինչպես նաեւ նոր հաստատված տվյալների առկայության դեպքում, հանրությունը կտեղեկացվի պաշտոնական հայտարարությամբ:

Կոչ ենք անում բոլորին ցուցաբերել տեղեկատվական պատասխանատվություն, մինչեւ փաստերի պաշտոնական հաստատումը չհրապարակել եւ չտարածել չստուգված նյութեր, ինչպես նաեւ առաջնորդվել բացառապես պաշտոնական եւ հավաստի աղբյուրների կողմից հրապարակվող տեղեկատվությամբ:

Հ.Գ. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տվյալ լուսանկարի հրապարակումը կարող է հոգեբանական բացասական ազդեցություն ունենալ հանրության, մասնավորապես՝ բռնի տեղահանված արցախահայության վրա, այն չենք հրապարակում:

ԱՄՈՒՄՆԱՑԵԼ Է

ArmLur.am-ի տեղեկություններով, օրերս տեղի է ունեցել Երեւանի Արաբկիր վարչական շրջանի ղեկավար Սուրեն Վարոսյանի հարսանեկան արարողությունը, որը կազմակերպվել է Արաբկիրի «Երազ» այգու ռեստորանային համալիրներից մեկում: Ըստ նույն աղբյուրի՝ միջոցառումը բացօթյա է եղել, իսկ հյուրերի թվում եղել են իշխանության տարբեր ներկայացուցիչներ, վարչական շրջանների ղեկավարներ եւ Վարոսյանի մտերիմները: Ավելին, հարսանեկան արարողությանը կարճ ժամանակով մասնակցել է նաեւ վարչապետ Նիկոլ Փաշինյանը:

Սուրեն Վարոսյանը հանրությանը հայտնի դարձավ նախ որպես վարչապետի աշխատակազմի արարողակարգային պատասխանատու, իսկ հետագայում տեղափոխվեց Երեւանի կառավարման համակարգ: 2024 թվականին նա նշանակվել է Արաբկիր վարչական շրջանի ղեկավարի տեղակալ եւ ժամանակավորապես կատարել ղեկավարի պարտականությունները, իսկ 2025 թվականի օգոստոսին պաշտոնապես նշանակվել է Արաբկիր վարչական շրջանի ղեկավար:

Ս. Գ.

ՇԱՀՈՒՄ ԵՆ ՎՐԱՑԻ ՄԻՋՆՈՐԴՆԵՐԸ

ՌԴ սահմանափակումներից շահում են վրացի միջնորդները. հայկական ծաղիկը «վրացական» ճանապարհով է հասնում ՌԴ: Ռուսաստանի կողմից հայկական արտադրանքի ներմուծման նկատմամբ կիրառվող սահմանափակումների ֆոնին ուշագրավ պատկեր է ձեւավորվում տարածաշրջանային առեւտրում: ArmLur.am-ը Հայաստանի վիճակագրական կոմիտեից տեղեկացավ, որ 2026 թվականի մայիսին Հայաստանից Վրաստան ծաղիկների արտահանումը նախորդ տարվա նույն ամսվա համեմատ աճել է շուրջ երեք անգամ՝ հասնելով 218 տոննայի: Ավելին, այս տարվա ապրիլի համեմատ աճը գրեթե կրկնակի է: Մարտին եղել է 129 տոննա, իսկ մայիսին 218 տոննա ծաղիկ եւ կոկոն: Թվերը դժվար է բացատրել միայն վրացական շուկայում պահանջարկի աճով: Ոլորտի մասնագետների գնահատմամբ՝ ռուսական սահմանափակումներից հետո ձեւավորվել է նոր առեւտրային շղթա, որտեղ հիմնական շահառուները դարձել են վրացի միջնորդներն ու վերավաճառողները: Փաստացի ստեղծվել է մի իրավիճակ, երբ հայկական արտադրանքը նախ արտահանվում է Վրաստան, այնտեղ վերավաճառվում կամ վերաձեւակերպվում, ապա արդեն վրացական ընկերությունների միջոցով հասնում ռուսական շուկա: Այսինքն՝ այն ապրանքը, որը նախկինում Հայաստանից անմիջապես էր արտահանվում Ռուսաստան, այժմ անցնում է լրացուցիչ միջնորդական օղակով: Արդյունքում շահում են ոչ թե արտադրողները, ոչ թե պատժվում էՀՀ իշխանությունը, այլ՝ բարգավաճում են վրացի միջնորդները: Հայկական արտադրողը ստիպված է հավելյալ ծախսեր կրել, իսկ վրացի գործարարները ստանում են լրացուցիչ եկամուտ՝ փաստացի օգտագործելով ստեղծված իրավիճակը:

Ս. Գ.

ԿԱԼԱՆԱՎՈՐԵԼ ԵՆ

ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ իրավապահները կալանավորել են Դավիթ Ղազինյանի սանիկին՝ Արման Սարգսյանին: Հայտնել էինք, որ «Ուժեղ Հայաստան» դաշինքի պատգամավորի թեկնածու Դավիթ Ղազինյանը դատական հայց է ներկայացրել Կենտրոնական ընտրական հանձնաժողովի դեմ՝ պահանջելով անվավեր ճանաչել իր նկատմամբ քրեական հետապնդում հարուցելուն եւ իրեն ազատությունից զրկելուն համաձայնություն տալու ԿԸՀ որոշումները: Դատախազությունը եւս դատարանում ներգրավված է որպես երրորդ անձ:

Նշենք, որ հունիսի 6-ին Հակակոռուպցիոն կոմիտեն դիմել էր ՀՀ գլխավոր դատախազություն՝ պատգամավորի թեկնածու գրանցված Դավիթ Ղազինյանին անձեռնմխելիությունի զրկելու նպատակով ԿԸՀ միջնորդություն ներկայացնելու համար: Դատախազությունը ներկայացրել էր երկու դիմում՝ հանձնաժողովին խնդրելով համաձայնություն տալ քրեական հետապնդում հարուցելուն եւ թեկնածուին ազատությունից զրկելուն: Հունիսի 17-ին ԿԸՀ-ն երկու միջնորդություններն էլ բավարարել էր, եւ ժամեր անց Դավիթ Ղազինյանը ձերբակալվել էր: Արդեն հաջորդ օրը՝ առավոտյան, որոշում էր կայացվել նրան երկու ամսով կալանավորելու մասին:

Ղազինյանի կողմից ներկայացված հայցն ընդունվել է վարույթ եւ մակագրվել վարչական դատարանի դատավոր Լիլիթ Սադոյանին: Վերջինս Կենտրոնական ընտրական հանձնաժողովից պահանջել է ներկայացնել հունիսի 17-ի որոշումների կայացման համար հիմք հանդիսացած վարչական վարույթի նյութերն ամբողջ ծավալով, ինչպես նաեւ արտահերթ նիստի ձայնագրությունները: ԿԸՀ-ն պետք է դրանք անհապաղ ներկայացնի՝ որոշումը ստանալու պահից:

Հիշեցնենք, որ հունիսի 6-ին Հակակոռուպցիոն կոմիտեն հաղորդագրություն եւ ձայնագրություն էր տարածել, որտեղ նշվում էր Ղազինյանի կողմից 1,4 մլն դրամ ենթադրյալ ընտրակաշառք տալու մասին: «ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների կողմից իրականացված միջոցառումների արդյունքում փաստական տվյալներ են ստացվել այն մասին, որ «Ուժեղ Հայաստան» կուսակցության Երեւանի Արաբկիր վարչական շրջանի գրասենյակում որպես պատասխանատու նշանակված անձինք, ինչպես նաեւ նույն կուսակցության պատգամավորի թեկնածու գրանցված Դավիթ Ղազինյանը, կուսակցության համակիրների եւ նրանց հետ համագործակցող մի խումբ անձանց հետ նախնական համաձայնությամբ ընտրողներին խոստացել, ինչպես նաեւ տվել են ընտրակաշառք: Դեպքի առթիվ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում նախաձեռնվել է քրեական վարույթ, ձերբակալվել են մի շարք անձինք, կատարվել են խուզարկություններ եւ վարութային այլ գործողություններ»,-նշվում էր հաղորդագրությունում: Դավիթ Ղազինյանն առաջադրված մեղադրանքը չի ընդունում: «Չկա այդպիսի գումար, ես չգիտեմ՝ ով ում է տվել, ինչ է արել, չկա այդպիսի գումար: Նախ, եթե անգամ տեսականորեն դա տրված լիներ, ի՞նչ է նշանակում՝ ես մտել եմ տարածք կամ տվել եմ գումար ինչ-որ մեկին, ասել եմ՝ սա ընտրակաշառքի գումար է: Աբսուրդ է էլի»,-ասել էր նա:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՔՆՆԵԼՈՒ Է ԴԻՄՈՒՄՆԵՐԸ

Ո՞Վ Է ԷԴԳԱՐ ՇԱԹԻՐՅԱՆԸ

ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ հենց Սահմանադրական դատարանի դատավոր Էդգար Շաթիրյանն է զեկուցող նշանակվել այն առանցքային գործով, որով վիճարկվում են 2026 թվականի հունիսի 7-ի Ազգային Ժողովի ընտրությունների արդյունքները:

Ինչպես հայտնել է Սահմանադրական դատարանը, 2026 թվականի հունիսի 21-ի աշխատակարգային նիստում քննության են ընդունվել «Ուժեղ Հայաստան» կուսակցությունների դաշինքի, «Միասնության թեւեր», «Դեմոկրատիա Օրենք Կարգապահություն», «Բարգավաճ Հայաստան», «Հանուն Հանրապետության ժողովրդավարության պաշտպանների դաշինք», «Հայաստան» կուսակցությունների դաշինքի եւ «Նոր ուժ» ռեֆորմիստական կուսակցության դիմումները՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի՝ 2026 թվականի հունիսի 14-ի «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2026 թվականի հունիսի 7-ի հերթական ընտրությունների արդյունքներն ամփոփելու մասին» թիվ 259-Ա որոշման վերաբերյալ: Քանի որ բոլոր դիմումները վերաբերում են նույն հարցին, դրանք միավորվել են մեկ վարույթում եւ քննվելու են նույն դատական նիստում: Գործի քննությունը նշանակված է հունիսի 26-ին՝ ժամը 11:00-ին, բանավոր ընթացակարգով, իսկ գործով զեկուցող դատավորը լինելու է Էդգար Շաթիրյանը:

ArmLur.am-ը փորձել է պարզել, թե ինչ ունեցվածք եւ եկամուտներ ունի այն դատավորը, որի վրա դրված է ընտրությունների արդյունքների վերաբերյալ ամենաքննարկվող գործերից մեկի զեկուցման պատասխանատվությունը:

Շաթիրյանը Սահմանադրական դատարանի դատավոր է 2020 թվականի սեպտեմբերի 17-ից: Նրա վերջին՝ 2025 թվականի հայտարարագրի համաձայն, տարեսկզբին նա ունեցել է Երեւանի Կենտրոն վարչական շրջանում գտնվող բնակարան, իսկ տարվա ընթացքում ձեռք է բերել եւս մեկ բնակարան Երեւանի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանում: Վերջինս գնվել է «4Ա ԿԱՊԻՏԱԼ» ՍՊԸ-ից՝ 48 մլն 882 հազար 333 դրամով: Արդյունքում 2025 թվականի ավարտին դատավորի սեփականության ներքո գտնվել են երկու բնակարաններ:

Միաժամանակ հայտարարագրում առկա են խոշոր փոխառություններ: «ԴԻՍՔԱՎԵՐԻ» ԲԲԸ-ի նկատմամբ պահպանվել է 35 մլն 510 հազար 400 դրամի պահանջ, իսկ «4Ա ԿԱՊԻՏԱԼ» ՍՊԸ-ին տրված 1 մլն 158 հազար 333 դրամ եւ Արմեն Հովոյանին տրված 47 մլն 724 հազար դրամ փոխառությունները ամբողջությամբ վերադարձվել են:

Դրամական միջոցների մասով տարվա վերջում նրա բանկային հաշիվներում առկա է եղել ավելի քան 8 մլն 947 հազար դրամ, իսկ կանխիկ միջոցները կազմել են 220 հազար դրամ:

2025 թվականին դատավորի ընդհանուր եկամուտը կազմել է 21 մլն 948 հազար 942 դրամ: Այդ գումարից 18 մլն 667 հազար 193 դրամը Սահմանադրական դատարանից ստացած աշխատավարձն է, 3 մլն 128 հազար 889 դրամը՝ ՀՀ ֆինանսների նախարարությունից ստացած այլ եկամուտը, իսկ Հայաստանի եվրոպական համալսարանից եւ Պետական կառավարման ակադեմիայից ստացել է համապատասխանաբար 72 հազար 750 եւ 80 հազար 110 դրամ:

Միաժամանակ 2025 թվականի վերջի դրությամբ Շաթիրյանն ունեցել է 24 մլն 771 հազար 211 դրամի վարկային պարտավորություն: Տարվա ընթացքում վարկի մարման համար վճարել է 3 մլն 478 հազար 673 դրամ, ինչպես նաեւ հայտարարագրել է 3 մլն 500 հազար դրամի չափով մեկ այլ խոշոր միանվագ ծախս:

Հայտարարագրերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ վերջին տարիներին Էդգար Շաթիրյանի ունեցվածքն աստիճանաբար աճել է: Եթե 2022 թվականին նա հայտարարագրել էր մեկ բնակարան եւ շուրջ 14.2 մլն դրամ եկամուտ, ապա 2023 թվականին արդեն ձեռք էր բերել երկրորդ բնակարանը, ներգրավել ավելի քան 25.5 մլն դրամ հիպոտեկային վարկ եւ ունեցել 45.2 մլն դրամ եկամուտ: 2024 թվականին վաճառել է Աջափնյակում գտնվող բնակարանը՝ ստանալով 46 մլն 138 հազար դրամ, ինչի արդյունքում նրա տարեկան եկամուտը հասել է 67 մլն 612 հազար 695 դրամի: 2025 թվականին դատավորը կրկին ընդլայնել է իր անշարժ գույքը՝ ձեռք բերելով նոր բնակարան Քանաքեռ-Զեյթունում:

Հատկանշական է, որ 2021 թվականին Շաթիրյանի տարեկան եկամուտը կազմել էր 125 մլն 545 հազար 490 դրամ, որի հիմնական մասը գոյացել էր Երեւանի Կենտրոն վարչական շրջանում գտնվող բնակարանի վաճառքից: Նույն թվականին նա ձեռք էր բերել նոր բնակարան՝ վճարելով 98 մլն 196 հազար դրամ:

Այսպիսով, ընտրությունների արդյունքների վերաբերյալ ամենակարեւոր սահմանադրական վեճերից մեկի զեկուցող նշանակված դատավոր Էդգար Շաթիրյանը ներկայումս ունի երկու բնակարան, տասնյակ միլիոնավոր դրամների չափով պահանջներ եւ փոխառություններ, շուրջ 25 մլն դրամի վարկային պարտավորություն, իսկ վերջին հինգ տարիների ընթացքում նրա հայտարարագրված եկամուտները միասին գերազանցել են 270 մլն դրամը:

Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՀՐԱԺԱՐԱԿԱՆ

Մեծ Բրիտանիայի վարչապետ Քիր Սթարմերը հայտարարել է իր հրաժարականի մասին: Նա հայտարարել է, որ մտադիր է հեռանալ Լեյբորիստական կուսակցության ղեկավարի պաշտոնից: Նա նշել է, որ Բրիտանիայում իշխող Լեյբորիստական կուսակցության նոր առաջնորդի ընտրությունները կսկսվեն հուլիսի 9-ին: Սթարմերը նշել է նաեւ, որ կշարունակի Մեծ Բրիտանիայի վարչապետի լիազորություններն իրականացնել մինչեւ իր իրավահաջորդի ընտրվելը:

ՊԱՏԳԱՄԱՎՈՐԻ ՈՐԴԻՆ ՆԵՐԿԱՅԱՑԵԼ Է

ԱԺ պատգամավոր Մարտուն Գրիգորյանի ավագ որդին ինքնակամ ներկայացել է իրավապահներին. նա կալանավորված է: Մարտուն Գրիգորյանի որդին՝ Կամո Գրիգորյանը, քրեական վարույթով դեռեւս 2025 թվականի հունիսից ունի մեղադրյալի կարգավիճակ: Այս ընթացքում Կամո Գրիգորյանը եղել է հետախուզման մեջ եւ օրերս՝ հունիսի 19-ին, ինքնակամ ներկայացել է իրավապահ մարմիններին: Վերջինիս պաշտպան Արսեն Բաբայանը, ի պատասխան մեր հարցման, հայտնեց. «Նրա նկատմամբ կիրառված է եղել երկամսյա կալանք: Ներկայանալուց հետո դատարանը վերստին, արդեն իր մասնակցությամբ քննարկելով կալանքի հարցը, որոշել է այն թողնել անփոփոխ: Կամո Գրիգորյանը ինքնակամ ներկայացել է իրավապահներին ապացուցելու իր անմեղությունը»:

Ք. Մ.

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ի ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՆԴՐԱՆԻԿ ԹԵՎԱՆՅԱՆԻ

«Մայր Հայաստան» ժողովրդական շարժումը հրապարակել է 50 մտավորականների հայտարարությունն՝ ի պաշտպանություն Անդրանիկ Թեւանյանի եւ բոլոր քաղբանտարկյալների:

«Սիրելի՛ հայրենակիցներ,

2026 թ. հունիսի 7-ի խորհրդարանական ընտրությունները, մեր կարծիքով, անցան համատարած ապօրինությունների, բռնաճնշումների, վախի մթնոլորտի տարածման, ընդդիմության նկատմամբ հրապարակային սպառնալիքների, ձերբակալությունների եւ հետապնդումների ներքո: Ապօրինի հետապնդման ենթարկվեցին բազմաթիվ ընդդիմադիր գործիչներ: Քվեարկությունից երկու շաբաթ առաջ ապօրինի քրեական գործ հարուցվեց «Մայր Հայաստան» կուսակցության նախագահ, ԲՀԿ նախընտրական ցուցակի երկրորդ համար Անդրանիկ Թեւանյանի նկատմամբ՝ նախընտրական արշավի բնականոն ընթացքը խափանելու եւ նրան մեկուսացնելու նպատակով:

Անընդունելի այս գործելաոճն իշխանությունների կողմից շարունակվում է նաեւ այսօր: Ակնհայտ է, որ նման ռեպրեսիվ միջոցներով իշխանությունները չեն կարող երկարաձգել իրենց կառավարման տարիները: Հետապնդելով հայրենասեր գործիչներին, այլախոհներին՝ նրանք թուլացնում են երկրի դիմադրողականությունը, վտանգի տակ դնում անվտանգությունը: Բացի այդ այս գործելաոճով հնարավոր չէ կառուցել ժողովրդավարական պետություն, ինչպես որ խոստացել էին: Տպավորություն է, որ գործող իշխանությունը փորձում է ստեղծել նոր բռնապետություն եւ ձեւավորել վախի համատարած մթնոլորտ՝ 1937 թ. ստալինյան ռեպրեսիաների օրինակով:

Հայ մտավորականության բազմաթիվ ներկայացուցիչներ խիստ անհանգստացած են երկրում կատարվող իրադարձություններից եւ օրհասական այս պահին լռելու ու անտարբեր լինելու բարոյական իրավունք չունեն: Մի կողմից հայոց պետականության կորուստը կասեցնելու հրամայականը, մյուս կողմից՝ ապագայի հանդեպ պատասխանատվությունը, մեզ կանգնեցրել են մեր ձայնը հնչեցնելու պարտավորության առջեւ:

Մենք՝ ներքոստորագրյալներս, մեր անվերապահ զորակցությունն ենք հայտնում շինծու գործով ազատազրկված Անդրանիկ Թեւանյանին եւ բոլոր քաղբանտարկյալներին, որոնք ազնվորեն լծված են պետության գոյության համար պայքարի գործին:

Ազատությո՛ւն Անդրանիկ Թեւանյանին:

Ազատությո՛ւն բոլոր քաղբանտարկյալներին:

1. Արթուր Սահակյան - ռեժիսոր
2. Լեւոն Հարությունյան - դերասան
3. Սամվել Հարոյան - մշակույթի գործիչ
4. Սամվել Թադեւոսյան - ռեժիսոր, ՀՀ կինեմատոգրաֆիստների միության անդամ
5. Մարտին Վարդազարյան - կոմպոզիտոր, ՀՀ ժողովրդական արտիստ
6. Գուրգեն Մելիքյան - վաստակավոր մանկավարժ, պրոֆեսոր
7. Թաթուլ Մանասերյան - տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
8. Աշոտ Ավագյան - նկարիչ, ՀՀ պետական մրցանակի դափնեկիր
9. Աննա Մայիլյան - երգչուհի, ՀՀ վաստակավոր արտիստ
10. Լեւոն Գալստյան - կինոսցենարիստ
11. Ժիրայր Դադասյան - բեմադրիչ, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ
12. Ներսիկ Իսպիրյան - երգիչ, ՀՀ վաստակավոր արտիստ
13. Դավիթ Ամալյան - երգիչ, երգահան, ՀՀ վաստակավոր արտիստ
14. Արամ Գեւորգյան (Արամո) - երգիչ, ՀՀ վաստակավոր արտիստ
15. Էմմա Պետրոսյան - երգչուհի, երգահան, ՀՀ վաստակավոր արտիստ
16. Մերուժան Տեր-Գուլանյան - գրող, հրապարակախոս
17. Արշակ Զաքարյան - կինոռեժիսոր, սցենարիստ
18. Նառա Սարգսյան - բանասիրական գիտությունների թեկնածու
19. Արտաշես Բախշյան - սոցիոլոգիական գիտությունների թեկնածու
20. Լուսինե Հարոյան - սոցիոլոգ, հոգեբան
21. Կարեն Արիստակեսյան - մշակույթի գործիչ
22. Մուրադ Մշեցի - երգիչ, երգահան
23. Սարգիս Բաղդասարյան - երգիչ, մշակույթի վաստակավոր գործիչ
24. Աշխունջ Պողոսյան - ազգագրագետ, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ
25. Արա Նախշքարյան - մշակույթի գործիչ
26. Կարո Շահբազյան - մշակույթի գործիչ
27. Դավիթ Վարդազարյան - արեւելագետ (բգթ)
28. Սամվել Գալստյան - երգիչ, երգահան, պրոֆեսոր
29. Ռազմիկ Մարտիրոսյան - սոցիոլոգ, հասարակագետ
30. Արմեն Մուսայելյան - տնտեսագետ, հասարակական գործիչ
31. Ատոմ Մխիթարյան - ՀՀ ԳԱԱ մագիստրատուրայի դեկան
32. Աստղիկ Ավետիսյան - ԵՊՀ դոցենտ
33. Վահան Եղիազարյան - հասարակական եւ մշակութային գործիչ
34. Տիգրան Արզումանյան - քանդակագործ, ՀՀ վաստակավոր նկարիչ
35. Աղասի Թադեւոսյան - մշակութաբան, դերասան
36. Կարո Վարդանյան - գրականագետ, արվեստի վաստակավոր գործիչ
37. Արսեն Համբարյան - գրող, երգահան, երգիչ
38. Հրաչ Գրիգորյան - Պետական կոնսերվատորիայի դոցենտ
39. Թադեւոս Տոնոյան - բանաստեղծ, բ. գ. թ., դոցենտ
40. Տիգրան Չոբանյան - ճարտարապետ
41. Ռոբերտ Եսայան - բանաստեղծ
42. Հովիկ Վարդումյան - գրող, ՀԳՄ նախագահության անդամ
43. Մենուա Սողոմոնյան - պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ 44. Ցոլակ Ակոպյան - քաղաքական գիտությունների թեկնածու, դոցենտ
45. Արմեն Մանվելյան - ՀՀ ԳԱԱ առաջատար մասնագետ
46. Կարապետ Հակոբյան - ինժեներ-էկոլոգ
47. Ռուբեն Հովհաննիսյան - մասսայական միջոցառումների ռեժիսոր
48. Արմինե Սարգսյան - պատմաբան, պատմական գիտությունների թեկնածու
49. Արսինե Նավասարդյան - դերասանուհի, ռեժիսոր
50. Դավիթ Կարապետյան - մշակույթի գործիչ»:

ՎԵՐԱԴԱՐՁՎԵԼ Է ՀԱՄԱՅՆՔԻՆ

Սյունիքի մարզի դատախազությունը, պետական (համայնքային) շահերի պաշտպանության լիազորության շրջանակում, ուսումնասիրել է Սյունիքի մարզի Սիսիան համայնքի Սիսիան քաղաքի «Մայիսի 28» զբոսայգու տարածքում գտնվող հողամասերը տարբեր անձանց տրամադրելու վերաբերյալ փաստաթղթերը: Այս մասին տեղեկանում ենք Դատախազությունից: Ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ Սիսիան քաղաքի «Մայիսի 28» զբոսայգու տարածքում գտնվող՝ 0,08 հա մակերեսով հողամասը, օրենքի պահանջների խախտմամբ, կառուցապատման իրավունքով հատկացվել է ֆիզիկական անձի: Դատախազի կողմից միջնորդագիր է հասցեագրվել Սիսիան համայնքի ղեկավարին՝ Սիսիան համայնքի եւ կառուցապատողի միջեւ 2011 թվականի ապրիլի 30-ին կնքված կառուցապատման իրավունքը դադարեցնելու ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու վերաբերյալ: Միջնորդագրի հիման վրա, Սիսիանի համայնքապետարանի իրավասու մարմինների կողմից ձեռնարկված միջոցառումների արդյունքում, 2026 թվականի հունիսի 19-ին Կադաստրի կոմիտեում դադարեցվել է Սիսիան համայնքի «Մայիսի 28» զբոսայգում գտնվող՝ 0,08 հա մակերեսով, 1 միլիոն 502 հազար դրամ շուկայականին մոտարկված կադաստրային արժեքով հողամասի նկատմամբ գրանցված կառուցապատման իրավունքը: Հողամասը վերադարձվել է Սիսիան համայնքի տիրապետմանը:

ԼՈՒՐԵՐ

ՊԱՀԱՆՋՈՒՄ Է ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼ

2026 թվականի մայիսի 22-ին ՀՀ քննչական կոմիտեի ներկայացուցիչները, ՀՀ ազգային անվտանգության ծառայության աշխատակիցների ուղեկցությամբ խուզարկություններ են իրականացրել «Մայր Հայաստան» կուսակցության գրասենյակում, Անդրանիկ Թեւանյանի բնակարանում, ավտոտնակում եւ մեքենայում, ինչի արդյունքում, ի թիվս այլնի, առգրավվել են նաեւ «7or.am» լրատվավերլուծական կայքի տեխնիկական միջոցները, որոնցով ապահովվում էր կայքի անխափան աշխատանքը: Արդյունքում «7or.am» լրատվավերլուծական կայքի աշխատանքը այդ օրվանից ցայսօր պարալիզացված է:

Հայաստանի ԶԼՄ-ների ասոցիացիան դատապարտում է իրավապահ մարմինների այս մոտեցումը: Միանշանակ է, որ այն ուղղակիորեն հակասում է ժողովրդավարական հասարակության հիմնարար արժեքներին, խոսքի եւ մամուլի ազատությանը, ինչպես նաեւ լրատվամիջոցների անխոչընդոտ գործունեության սկզբունքին՝ ցավով արձանագրելով, որ սույն գործելաոճը դարձել է կրկնվող:

Հաշվի առնելով վերը նշվածը՝ Հայաստանի ԶԼՄ-ների ասոցիացիան ՊԱՀԱՆՋՈՒՄ Է.

* Անհապաղ վերադարձնել «7or.am» լրատվամիջոցի գործունեության համար կենսական նշանակություն ունեցող ամբողջ տեխնիկան՝ կայքի բնականոն գործունեությունը աշխատանքային հուն վերադարձնելու նպատակով:

* Ապագայում զերծ մնալ լրատվամիջոցի պարալիզացում առաջացնող գործելաոճից, անկախ հանգամանքից, թե ինչ վարույթի շրջանակում է իրականացվել գործողությունը:

Միեւնույն ժամանակ, Հայաստանի ԶԼՄ-ների ասոցիացիայի անդամ լրատվամիջոցներս, այս դեպքում եւս, վերահաստատում ենք մեր պատրաստակամությունը՝ տեխնիկապես եւ մասնագիտական ռեսուրսներով օժանդակել «7or.am» լրատվականին՝ աջակցելով, որպեսզի նրանց մեդիա արտադրանքի շարունակականությունն ապահովվի մինչեւ տեխնիկայի վերադարձը եւ լրատվամիջոցի բնականոն գործունեության լիարժեք վերականգնումը:

ԳԵՏՈՒՄ ԼՈՂԱԼԻՍ

Հունիսի 21-ին՝ ժամը 17:15-ի սահմաններում, Գեղարքունիքի մարզում տեղեկություններ են ստացվել, որ Ներքին Գետաշեն բնակավայրում գտնվող Արգիճի գետում երեխա է ջրահեղձ եղել: Shamshyan.com-ի տեղեկություններով՝ նշված գետում Գեղարքունիքի մարզի բնակիչ 17-ամյա Աշոտ Ա.-ն իր 2 ընկերների հետ լողալիս է եղել: Ընկերները կարողացել են դուրս գալ, իսկ նա, ըստ նրանց հայտնածի, ջրահեղձ է եղել: Դեպքի փաստով Մարտունու քննչական բաժնում նախաձեռնվել է քրեական վարույթ, որտեղ պարզվում են մահացածի եւ նրա հետ գետում լողացող ընկերների ամբողջական տվյալները:

● *Հայաստանի Հանրապետությունում հունիսի 19-ից 22-ը բացահայտվել է թմրանյութի հայտնաբերման 25 դեպք:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՄԵԾ ՎՆԱՍՆԵՐ

Հունիսի 19-ի երեկոյան՝ ժամը 22.20-ի սահմաններում, մոտ 20 րոպե անձրեւի ու ուժեղ քամու ուղեկցությամբ տեղացած կարկուտը մեծ վնասներ է հասցրել Տավուշի մարզի սահմանամերձ Ոսկեպար, Կիրանց, Աճարկուտ, Բերքաբեր գյուղերին: Կարկուտը Ոսկեպարում ավերել է գյուղի բանջարանոցները, պտղատու ծառերը, խաղողի վազերը, բերքը, Ոսկեպարի 3 ընտանիքներին պատկանող արեւային կայանները: Սելավները խճով փակել, անանցանելի են դարձրել գյուղի մի քանի փողոցներ, հեղեղել մի քանի տների նկուղներ, քամուց 2 բնակչի բնական գազի խողովակները հաշվիչների հետ պոկվել են: Ուժգին քամուց Ոսկեպարի բնակիչներից մեկի խոտի դեզի մոտ 50քմ մակերեսով ծածկը պոկվել, 40 մետր տեղաշարժվել է: Հունիսի 20-ի առավոտյան Ոսկեպարի առանձին տեղերում դեռեւս առկա էին կարկուտի չհալված կույտեր, ծառերի տակ թափված էին կարկտահարված կանաչ տերեւներ: Ոսկեպարի վարչական ղեկավար Իշխան Աղբալյանը հայտնեց, որ հունիսի 20-ին գյուղում աշխատում են էլցանցի, գազի հիմնարկի, Նոյեմբերյանի համայնքապետարանի կոմունալ հիմնարկության աշխատողներ, այդ հիմնարկության տրակտորը մաքրում, բարեկարգում է սելավից տուժած փողոցները: Այդ ժամանակ տեղի ունեցած կարկտահարությունից մեծ վնասներ են եղել նաեւ Ոսկեպարի հարեւան Կիրանց գյուղում, որտեղ տեղացած կարկուտն ավելի խոշոր է եղել: Կիրանցին կից Աճարկուտ գյուղի ռեստորանային համալիրում կայացած հարսանիքի մասնակիցների տասնյակ ավտոմեքենաներ կարկտից վնասվել են:

Հաջորդ օրը՝ հունիսի 20-ին՝ ժամը 19.30-ին սկսված, մոտ 20 րոպե տեղացած կարկուտը մեծ վնասներ է պատճառել Նոյեմբերյան համայնքի սահմանամերձ Ոսկեվան, Կոթի, Բաղանիս, Ջուջեւան գյուղերին: Խոշոր, հավի ձվի չափ, անկանոն տեսքով, ելուստներով կարկտահատիկներն ավերել են բանջարանոցներ, այգիներ, խաղողի վազեր, ծակել տների, անասնագոմերի ու այլ շինությունների ասբոշիֆերյա ծածկեր, վնասել դրսում կայանած ավտոմեքենաներ: Տեղացիներն ասում են, որ վերջին 60-70 տարում նման մեծության կարկուտ չեն տեսել: Կարկտահարությունից տուժած գյուղացիները օգնության խնդրանքով գրավոր դիմել են Նոյեմբերյանի համայնքապետարան: Նոյեմբերյանի համայնքապետարանում ստեղծվել է կարկտահարության վնասներն ուսումնասիրող հանձնաժողով: Այդ հանձնաժողովը կարձանագրի, կհաշվարկի բնական աղետի պատճառած վնասները, սակայն համայնքը ֆինանսական միջոցներ չունի, որպեսզի աջակցի կամ փոխհատուցի գյուղացիների վնասները: Վերջին տարիներին պետությունը չի աջակցել կարկտահարությունից շատ վնասներ կրած Տավուշի բնակիչներին: Կարկտի դեմ պայքարի միջոց են հակակարկտային կայանները: Տավուշի մարզում տեղադրված են 14 հակակարկտային կայաններ, բոլորը՝ Նոյեմբերյան համայնքում, մարզի մյուս 3 համայնքներում՝ Իջեւանում, Դիլիջանում, Բերդում, նման կայաններ առկա չեն: Նիկոլ Փաշինյանի իշխանության 8 տարիներին Տավուշում ոչ մի հակակարկտային կայան չի տեղադրվել:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

THE GUARDIAN

ՀՈԴՎԱԾ՝ ԳԱԳԻԿ ԾԱՌՈՒԿՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Հեղինակավոր բրիտանական պարբերական The Guardian-ը հրապարակել է ծավալուն հոդված հայ գործարար եւ քաղաքական գործիչ Գագիկ Ծառուկյանի մասին, որտեղ մանրամասն ներկայացվում են նրա անձնական կյանքը, տնտեսական գործունեությունը, քաղաքական անցյալը եւ նոր խոշոր նախաձեռնությունները:

Մասնավոր կենդանաբանական այգի եւ շքեղ կալվածք

Հոդվածում նկարագրվում է, որ Երեւանի մերձակայքում գտնվող Ծառուկյանի ընդարձակ կալվածքում գործում է մասնավոր կենդանաբանական այգի, որտեղ պահվում են վագրեր, առյուծներ եւ ալիգատորներ: Բացի կենդանիներից, տարածքում կա նաեւ շքեղ դահլիճ, որտեղ ցուցադրված են որսած կենդանիների խրտվիլակներ՝ վագրեր, արծիվներ, արջեր եւ գայլեր: Ըստ հոդվածի՝դրանք բոլորը որսացել է հենց Ծառուկյանը: Այս հատվածում լրագրողները ընդգծում են նրա շքեղ ապրելակերպը եւ այն, որ տարիներ շարունակ նրա ունեցվածքը դարձել է հանրային քննարկման թեմա Հայաստանում:

Հիսուսի՝աշխարհի ամենամեծ արձանի նախագիծը

Հոդվածի հիմնական մասը նվիրված է Ծառուկյանի նոր նախաձեռնությանը՝ Հիսուսի՝ աշխարհի ամենաբարձր արձանի կառուցմանը: Նախատեսվում է, որ արձանը կունենա մոտ 101 մետր բարձրություն եւ կտեղադրվի Հատիս լեռան վրա՝ Երեւանից մոտ 25 կմ հեռավորության վրա:Ծառուկյանի խոսքով՝ այս արձանը պետք է դառնա Հայաստանի «այցեքարտը» եւ ներկայացնի երկիրը որպես աշխարհի ամենահին քրիստոնեական պետություններից մեկը: Նա նաեւ ընդգծում է, որ Հայաստանը պետք է ունենա աշխարհի ամենամեծ Հիսուսի արձանը՝ հիմնավորելով երկրի պատմական կրոնական ինքնությամբ:

Հոդվածում նշվում է, որ Ծառուկյանը նախագիծը կապում է համաշխարհային միտումների հետ, որտեղ համադրվում են կրոնական հավատքը, ազգային գաղափարները եւ պահպանողական քաղաքական շարժումները: Նա ակնկալում է, որ նախագիծը կունենա միջազգային լայն արձագանք եւ զբոսաշրջային մեծ հոսք: Լրագրողները նշում են նաեւ, որ այս գաղափարը ներկայացվում է ոչ միայն որպես տեղական նախաձեռնություն, այլ որպես ավելի լայն գաղափարական շարժման մաս: Հոդվածում ընդգծվում է, որ նախագիծը միանշանակ չի ընդունվում: Հայ Առաքելական եկեղեցին քննադատում է նախաձեռնությունը՝նշելով, որ հայկական կրոնական ավանդույթը հիմնված է եկեղեցիների եւ խաչքարերի վրա, ոչ թե հսկայական արձանների, իսկ բնապահպանական շրջանակները զգուշացնում են, որ Հատիս լեռան վրա իրականացվող շինարարությունը կարող է վնասել բնությանը եւ լանդշաֆտին:

Քաղաքական ազդեցություն եւ անկում

Հոդվածում ներկայացվում է, որ Ծառուկյանը երկար տարիներ եղել է Հայաստանի ամենաազդեցիկ գործարարներից եւ քաղաքական գործիչներից մեկը: Սակայն վերջին ընտրություններում նրա քաղաքական ուժը չի հաղթահարել անհրաժեշտ շեմը, ինչի արդյունքում նրա քաղաքական ազդեցությունը նվազել է: Ըստ պարբերականի նա նաեւ համարվել է հետխորհրդային օլիգարխիկ համակարգի կարեւոր դեմքերից մեկը: Հոդվածում նշվում է, որ ներկայիս իշխանությունները նրան դիտարկում են որպես նախկին համակարգի եւ օլիգարխիկ կառուցվածքի խորհրդանիշ: Նրա անունը հաճախ կապվել է նախկին իշխանական շրջանակների եւ տնտեսական ազդեցության կենտրոնների հետ:

Շինարարական բարդություններ

Հոդվածում նշվում է, որ Հիսուսի արձանի կառուցումը բարդ ինժեներական նախագիծ է: Սկզբում նախատեսվել է արձանի մասերը տեղափոխել ուղղաթիռներով, սակայն հետո այդ գաղափարը փոխվել է, եւ որոշվել է դրանք տեղափոխել բեռնատարներով՝ աստիճանաբար հավաքելով լեռան վրա:

Նոյան տապանի մեգանախագիծը

Ծառուկյանը սկսել է նաեւ երկրորդ խոշոր նախագիծ՝ «Նոյան տապանի» հսկայական համալիր: Այն նախատեսվում է ներառել թանգարան, հյուրանոց եւ սրճարան, եւ ներկայացվում է որպես նոր զբոսաշրջային կենտրոն:

Հասարակական արձագանք

Հոդվածում ներկայացվում են տարբեր կարծիքներ: Որոշ մարդիկ նախագիծը դիտում են որպես Հայաստանի միջազգային ճանաչելիության հնարավորություն եւ հպարտության աղբյուր: Մյուսները այն համարում են չափազանց շքեղ, ոչ անհրաժեշտ եւ երկրի իրական խնդիրներից կտրված նախաձեռնություն:

The Guardian-ը եզրափակում է, որ Ծառուկյանի նախագծերը մի կողմից դիտվում են որպես ազգային ժառանգության եւ զբոսաշրջության զարգացման փորձ, մյուս կողմից՝ որպես չափազանց շքեղ եւ հակասական նախաձեռնություններ:

Թարգմանությունը՝ԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ

ԾՆՆԴՅԱՆ ՕՐՆ ԷՐ

Երեկ Արցախի Հանրապետության երկրորդ նախագահ Արկադի Ղուկասյանի ծննդյան օրն էր: Արկադի Ղուկասյանը ծնվել է 1957 թվականի հունիսի 22-ին Ստեփանակերտում: Հայրը զբաղեցնում էր Ղարաբաղի գլխավոր բժշկի դաշտոնը, իսկ մայրը ուսուցիչ էր:

1974 թվականին ավարտել է Ստեփանակերտի թիվ 8 միջնակարգ դպրոցը, 1979 թվականին՝ Երեւանի պետական համալսարանը: Անցել է պարտադիր ծառայություն ԽՍՀՄ բանակում որպես սպա: Աշխատանքային գործունեությունն սկսել է 1980 թվականին «Սովետական Ղարաբաղ» թերթում՝ սկզբում որպես թղթակից, իսկ 1981 թվականից՝ գլխավոր խմբագրի տեղակալ:

1988 թվականից ղարաբաղյան շարժման ակտիվ մասնակից է: 1992 թվականին Արկադի Ղուկասյանն ընտրվել է Արցախի Հանրապետության առաջին գումարման խորհրդարանի պատգամավոր: 1992 թվականի սեպտեմբերին Արկադի Ղուկասյանը նշանակվում է ԱՀ Պաշտպանության Պետական Կոմիտեի (ՊՊԿ) նախագահի քաղաքական հարցերով խորհրդական: Միաժամանակ նա կատարում է Մինսկի խմբի հովանու ներքո Ադրբեջանի հետ հակամարտության կարգավորման բանակցություններում Արցախի Հանրապետության պատվիրակության ղեկավարի գործառույթները:

1993 թվականի հուլիսին ԼՂՀ-ում ստեղծվում է արտաքին գործերի նախարարություն, եւ այդ գերատեսչության առաջին ղեկավար է նշանակվում Արկադի Ղուկասյանը: Նրա՝ԱՀ ԱԳՆ ղեկավար աշխատելու ժամանակ, ղարաբաղյան դիվանագիտությունը բանակցային գործընթացում հասել է ԼՂՀ-ի համար լուրջ դրական արդյունքների: Հատկապես նշանակալի է Ղուկասյանի ներդրումը Արցախի Հանրապետության՝ որպես հակամարտության կողմի, փաստացի միջազգային ճանաչման գործում: Որպես ԼՂՀ արտաքին գործերի նախարար, Ղուկասյանը ելույթներ է ունեցել Ռուսաստանի Դաշնության Պետական դումայում (Պառլամենտ), Մինսկում տեղի ունեցած միջազգային կոնֆերանսում կապված ԱՊՀ ստեղծման հնգամյակին եւ այլն:

1997 թվականի սեպտեմբերին անցկացված ԱՀ արտահերթ նախագահական ընտրություններում Ղուկասյանը ձայների ճնշող մեծամասնությամբ ընտրվում է Արցախի Հանրապետության նախագահ: 2000թ-ի մարտի 22ին Ղուկասյանի վրա կատարվում է մահափորձ, որը հետեւանք էր նրա պայքարի կոռուպցիայի եւ ամենաթողության դեմ: 2002 թվականի օգոստոսի 11-ին կայացած նախագահական ընտրություններում նա վերընտրվել է Արցախի Հանրապետության նախագահ: Որպես ԼՂՀ նախագահ, Ղուկասյանը բազմիցս այցելել է Մոսկվա, Վաշինգտոն, Փարիզ, Պրահա, որտեղ նա հանդիպումներ է ունեցել բարձր պետական մակարդակով:

2002թ-ի դեկտեմբերին Ադրբեջանի իշխանությունները Ղուկասյանի դեմ հետախուզություն են հայտարարում՝ որպես «գլխավոր սեպարատիստ»-ի: 2009թ-ին Ղուկասյանը նշանակվում է ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան:

ԱՀ երկրորդ Նախագահ Արկադի Ղուկասյանն արժանացել է «Արցախի հերոս» Արցախի Հանրապետության բարձրագույն կոչման եւ պարգեւատրվել «Ոսկե Արծիվ» շքանշանով:

● *Անցած 3 օրում գրանցվել է 33 ավտովթար. 1 մարդ զոհվել է, 59-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ԼՈՒՐԵՐ

ԱՐԺԱՆԱՑԵԼ Է ՄՐՑԱՆԱԿԻ

Արտարժութային SWIFT փոխանցումների բարձր որակի, գործառնական կատարելության եւ միջազգային թղթակցային հարաբերություններում երկարամյա արդյունավետ համագործակցության համար Հայէկոնոմբանկն արժանացել է ավստրիական առաջատար «Ռայֆայզեն Բանկ Ինտերնեյշնլ ԱԳ»-ի «Միջազգային փոխանցումների որակի գերազանցություն» հատուկ մրցանակին: Միջազգային թղթակցային հարաբերությունների շարունակական կատարելագործումն ու թվային լուծումների ներդրումը թույլ են տալիս Բանկին մշտապես ապահովել փոխանցումների բարձր որակ եւ համապատասխանություն: Մրցանակը, որը Ռայֆայզեն Բանկ Ինտերնեյշնլի կողմից շնորհվում է գործընկեր ֆինանսական կառույցներին, վկայում է Հայէկոնոմբանկում համապատասխան գործընթացների հստակ կազմակերպման եւ թիմի բարձր մասնագիտական պատրաստվածության մասին: Այն եւս մեկ անգամ փաստում է Հայէկոնոմբանկում հաճախորդներին միջազգային լավագույն փորձառությունն առաջարկելու հանձնառության մասին: Կարեւորելով միջազգային փոխանցումների ոլորտում արձանագրված հաջողությունները՝ Հայէկոնոմբանկը լիահույս է, որ Ռայֆայզեն Բանկ Ինթերնեյշնլի հետ ամուր եւ վստահելի համագործակցությունն առաջիկայում եւս կշարունակի ընդլայնվել նույն արդյունավետությամբ:

86 86 | aeb.am

Հայէկոնոմբանկը վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից (Գ)

ՄԱՀԱՑԵԼ Է

«ՀՅԴ Հայաստանի Գերագույն մարմինը խորը դառնությամբ ու սրտի կսկիծով գուժում է դաշնակցական հավատավոր ու վաստակաշատ ընկերուհի, Հայ Օգնության Միության Հայաստանի հիմնադիր անդամ եւ Հայաստանի գրասենյակի երկարամյա տնօրեն, ՀՅԴ Բյուրոյի երկարամյա ներկայացուցիչ ընկեր Հրանտ Մարգարյանի կնոջ՝ ընկերուհի Վեհանուշ Մարգարյանի անժամանակ մահը: Ընկերուհի Վեհանուշը տասնամյակների անձնվեր ու անդուլ աշխատանքով, հայրենանվեր գործունեությամբ եւ բարձրագույն արժեքներին հավատարմությամբ դարձավ հայ կնոջ եւ նվիրյալ ընկերոջ անկրկնելի օրինակ: ՀՅԴ Հայաստանի Գերագույն մարմինը սրտակցում եւ իր զորակցությունն է հայտնում Մարգարյանների ընտանիքին, հարազատներին եւ գաղափարակից ընկերներին: Ընկերուհի Վեհանուշ Մարգարյանի հոգեհանգստյան արարողությունը տեղի կունենա երեքշաբթի՝ հունիսի 23-ին՝ ժամը 17:00-20:00-ն, Կոնդի Սուրբ Հովհաննես եկեղեցում: Վերջին հրաժեշտն ու հուղարկավորությունը՝ չորեքշաբթի՝ հունիսի 24-ին՝ ժամը 13:00-ին, նույն եկեղեցուց»:

ՀՅԴ Հայաստանի Գերագույն մարմին 22 հունիսի, 2026թ.

ՆՈՐ ՓՈՒԼ Գ

ՆԵՐԴՐՎԵԼ Է ԿԱԴՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՆՈՐԱԳՈՒՅՆ ԾՐԱԳԻՐ

Երեւանի թատրոնի եւ կինոյի պետական ինստիտուտում մեկնարկել է զարգացման նոր փուլ: Բուհում ստեղծվել է ժամանակակից գունաշտկման լաբորատորիա, որտեղ ուսանողները յուրացնում են «Ստեփան Գիշյան» բարեգործական հիմնադրամի աջակցությամբ ձեռքբերված DaVinci ծրագիրը:

Ծրագրի միջոցով ուսանողներն այժմ հնարավորություն ունեն կառավարել կադրի լույսը, ստվերի ճիշտ խաղը, գույների հարմոնիան, խորությունը եւ այլն:

Երեւանի թատրոնի եւ կինոյի պետական ինստիտուտը Ստեփան Գիշյան բարեգործական հիմնադրամի 2025 թվականի դրամաշնորհային մրցույթի շահառուներից է, որի աջակցությամբ էլ ստեղծվել է գունաշտկման սենյակը:

«Ծրագրի հիմնական նպատակն է հատկապես վերջին կուրսի ուսանողներին հնարավորություն տալ ստեղծելու որակյալ ֆիլմեր եւ մասնակցել միջազգային փառատոնների: Ուսանողներն աշխատելու են DaVinci ծրագրով, որը կադրերի մշակման նորագույն եւ հզոր գործիք է: Ծրագիրն իր մեջ ներառում է ոչ միայն գունաշտկման, այլ նաեւ ձայնային եւ վիզուալ էֆեկտների գործիքակազմը»,- նշել է «Ստեփան Գիշյան» բարեգործական հիմնադրամի տնօրեն Աննա Գիշյանը:

««Ստեփան Գիշյան» հիմնադրամի շնորհիվ մենք դառնում ենք ունիկալ: Մինչեւ օրս Հայաստանում գունաշտկում, որքան էլ դա տարօրինակ հնչի, չի դասավանդվել: Մենք մեր կրթական ծրագրերը փոխեցինք, հիմա արդեն ուսանողները հետարտադրական փուլում կարող են ամբողջությամբ կիրառել նոր ծրագիրը»,-նշել է Երեւանի թատրոնի եւ կինոյի պետական ինստիտուտի ռեկտոր Սառա Նալբանդյանը:

«Ստեփան Գիշյան» բարեգործական հիմնադրամը ստեղծվել է Ակբա բանկի, ֆրանսիական Կրեդիտ Ագրիկոլ, Կրեդիտ Ագրիկոլ Ազգային Ֆեդերացիայի եւ Ստեփան Գիշյանի ընտանիքի կողմից: Հիմնադրամի ծրագրերը ուղղված են հայ-ֆրանսիական կապերի ամրապնդմանը, Հայաստանի սոցիալ-տնտեսական, գիտակրթական, մշակութային, առողջապահական համակարգերի բարելավմանն ու կատարելագործմանը:

ԼՈՒՐԵՐ Գ

ՍՏՈՐԱԳՐԵԼ ԵՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

team TM
TELECOM ARMENIA

22 հունիսի, 2026 թ., Երեւան. «Տելեկոմ Արմենիա» եւ «Ազերտելեկոմ» ընկերությունները ստորագրել են երկկողմ համաձայնագիր, որը նախատեսում է երկու երկրների տարածքներով տարանցիկ ինտերնետի փոխանցում եւ մատակարարում՝ կոմերցիոն հիմունքներով: Համաձայնագրի շրջանակում «Տելեկոմ Արմենիան», հանդիսանալով տարածաշրջանում առաջատար տարանցիկ օպերատոր, ընդլայնում է միջազգային ինտերնետային տրաֆիկի մատակարարման երկրների թիվը եւ աշխարհագրությունը՝ ապահովելով տարանցումը սեփական ենթակառուցվածքների միջոցով դեպի Ադրբեջան: Համաձայնագիրը նպատակ ունի նպաստելու տարածաշրջանում կապուղիների դիվերսիֆիկացմանը, հեռահաղորդակցության ցանցերի հուսալիության բարձրացմանը եւ տելեկոմ ոլորտում համագործակցության զարգացմանը:

«Տելեկոմ Արմենիա»-ի մասին

Տելեկոմ Արմենիա ԲԲԸ-ն (ապրանքանիշը՝ Team Telecom Armenia) հայկական ընկերություն է, որը առաջատար դիրք է զբաղեցնում երկրի հեռահաղորդակցության եւ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտներում: Հանդիսանալով Հայաստանում առաջին տելեկոմ ցանցի ժառանգորդը՝ ընկերությունը ունի ոլորտում ծառայությունների մատուցման ավելի քան 100 տարվա պատմություն: Team-ը տրամադրում է բջջային եւ ֆիքսված ինտերնետի, թվային հեռուստատեսության, բջջային եւ ֆիքսված հեռախոսակապի ծառայություններ թե՛ անհատ, թե՛ կորպորատիվ բաժանորդներին: Ընկերությունը նաեւ արդիականացրել եւ զարգացրել է իր DWDM ցանցը՝ ապահովելով հասանելիություն Մերձավոր Արեւելքի տարանցիկ կապի եւ ինտերնետի վաճառքի շուկաներին: Կարճ ժամանակահատվածում Team-ը դարձել է տարածաշրջանի ինտերնետի խոշորագույն արտահանող ընկերություններից մեկը:

ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

2026 թվականի հունիսի 22-ին կգումարվի «Յունիբանկ» ԲԲԸ-ի բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովը, որի ընթացքում կամփոփվեն Բանկի 2025 թվականի գործունեության արդյունքները եւ կքննարկվեն հետագա զարգացման հիմնական ուղղությունները: Բաժնետերերի ժողովը նաեւ որոշում կընդունի 2025 թվականի ֆինանսական արդյունքներով տարեկան շահութաբաժինների վճարման վերաբերյալ:

2025 թվականին Յունիբանկը շարունակել է պահպանել աճի բարձր տեմպերը՝ ապահովելով հիմնական ֆինանսական ցուցանիշների զգալի բարելավում: Հաշվետու տարվա արդյունքներով Բանկի ակտիվները կազմել են 393.8 մլրդ դրամ: Վարկային ներդրումները նախորդ տարվա համեմատ աճել են 32.5%-ով՝ 2025 թվականին հասնելով 264.6 մլրդ դրամի: Մանրածախ վարկային պորտֆելը աճել է 24%-ով՝ գերազանցելով 183 մլրդ դրամը: Հիփոթեքային վարկավորման ուղղությամբ գրանցվել է գրեթե 40% աճ: Բանկը շարունակել է ակտիվ զարգացնել նաեւ քարտային բիզնեսը. գործող քարտերի քանակն աճել է շուրջ 21%-ով: -Ձեռնարկատիրության աջակցությունը մնացել է Յունիբանկի ռազմավարական առաջնահերթություններից մեկը: Կորպորատիվ վարկային պորտֆելն աճել է 37%-ով եւ կազմել 77 մլրդ դրամ: Փոքր եւ միջին ձեռնարկությունների ֆինանսավորման շրջանակում Բանկը շարունակել է զարգացնել նաեւ բիզնես լիզինգը՝ գրանցելով լիզինգային պորտֆելի 55% աճ: 2025 թվականի ավարտին Բանկի պարտավորությունները կազմել են 343.6 մլրդ դրամ: Թողարկված պարտատոմսերի պորտֆելը տարվա ընթացքում աճել է 70%-ով: Յունիբանկը հաշվետու տարին ավարտել է 9.8 մլրդ դրամ զուտ շահույթով՝ հաստատելով իր կայուն ֆինանսական դիրքերը եւ զարգացման արդյունավետ ռազմավարությունը:

Moody's Ratings միջազգային վարկանիշային գործակալությունը վերահաստատել է Յունիբանկի երկարաժամկետ տեղական եւ արտարժույթով ավանդների վարկանիշը B1 մակարդակում՝ պահպանելով կայուն հեռանկարը:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ,հայտարարություն,հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

«ՈՍԿԵ ԾԻՐԱՆ»

ՀԱՅՏՆԻ Է ՄՐՑՈՒՅԹԻ ԺՅՈՒՐԻԻ ԿԱԶՄԸ

Երեւանի «Ոսկե ծիրան» 23-րդ միջազգային կինոփառատոնը ներկայացրել է միջազգային մրցույթի ժյուրիի ամբողջական կազմը:

Ժյուրիի նախագահն է Ջեսիկա Հաուսները, ով ժամանակակից ավստրիական կինոյի առաջատար դեմքերից է, որի ֆիլմերի պրեմիերաները կայացել են Կաննում եւ Վենետիկում՝ արժանանալով լայն ճանաչման ժանրային կինոյում նորարարական մոտեցման համար:

Մարկ Քազընսն իրլանդա-շոտլանդացի կինոպատմաբան եւ ռեժիսոր է, որի աշխարհահռչակ «Կինոյի պատմությունը. Ոդիսական» վավերագրական սերիալը դարձել է ժամանակակից կինոքննադատության հիմնարար գործերից մեկը: Նա հեղինակել է բազմաթիվ գրքեր եւ վավերագրական ֆիլմեր:

Նաուել Պերես Բիսկայարտն արգենտինացի դերասան է, ով առավել հայտնի է Ռոբեն Կամպիյոյի ֆրանսիական «Ռոպեում 120 հարված» ֆիլմում (2017) գլխավոր դերակատարմամբ, ինչի համար արժանացել է «Սեզար» եւ «Լյումիեր» մրցանակների:

Մարկ Պերանսոնը կանադացի գրող, պրոդյուսեր եւ երկարամյա կինոհամադրող է, ով եղել է Բեռլինալեի եւ Լոկառնոյի կինոփառատոնի ծրագրերի ղեկավար, իսկ կինոյի մասին նրա հոդվածները տպագրվել են «Sight and Sound», «Film Comment», «Cahiers du Cinema» եւ այլ հեղինակավոր պարբերականներում:

Շերմին Լանգհոֆը գերմանա-թուրքական թատերական պրոդյուսեր է, ով 2013-ից ի վեր Բեռլինի Գարկու թատրոնի գեղարվեստական ղեկավարն է: Նրա ղեկավարությամբ թատրոնը Գերմանիայում երկու անգամ ճանաչվել է «Տարվա թատրոն» եւ արժանացել բազմաթիվ մրցանակների:

Երեւանի «Ոսկե ծիրան» 23-րդ միջազգային կինոփառատոնը կանցկացվի 2026 թվականի հուլիսի 12-19-ը: Այս տարի եւս կինոփառատոնը կներկայացնի մրցութային եւ արտամրցութային ծրագրեր աշխարհի տարբեր երկրներից, ինչպես նաեւ ֆիլմեր հեղինակավոր միջազգային կինոփառատոններից՝ ներառյալ Կաննը, Բեռլինը եւ այլ առաջատար կինոհարթակներ:

Փառատոնի ընթացքում Հայաստան կժամանեն կինոյի համաշխարհային ճանաչում ունեցող հեղինակներ, ռեժիսորներ, դերասաններ եւ ոլորտի մասնագետներ, որոնք իրենց փորձն ու արվեստը կներկայացնեն հայ հանդիսատեսին՝ ստեղծելով երկխոսության, նոր գաղափարների եւ մշակութային փոխանակման բացառիկ հարթակ:

ՀԱՅՏՆԱԲԵՐԵԼ ԵՆ ՊԻԿԱՍՈՅԻ ԿՏԱՎԸ

Թմրանյութերի ապօրինի շրջանառության գործով սովորական խուզարկության ընթացքում ֆրանսիացի ոստիկանները անսպասելիորեն բախվել են մի գտածոյի, որն ավելի շատ կհամապատասխաներ արվեստի մասին դետեկտիվ ֆիլմի սյուժեին, գրում է News.am-ը:

Փարիզից ոչ հեռու գտնվող Շամպինիսյուր-Մառն քաղաքում գտնվող տներից մեկում, թմրանյութերի եւ թանկարժեք իրերի մեջ, հայտնաբերվել է իսպանացի հանրահայտ նկարիչ Պաբլո Պիկասոյի բնօրինակ կտավը, գրում է Le Parisien-ը: Հետաքննությունն անցկացրել են Վալ-դը-Մառն դեպարտամենտի դատական ոստիկանության աշխատակիցները՝ Փարիզի ոստիկանության պրեֆեկտուրայի հատուկ ստորաբաժանման մարտիկների հետ համատեղ: Սկզբում նրանց հետաքրքրում էին թմրանյութերի հնարավոր մատակարարումները: Կասկածները հաստատվեցին. խուզարկության ընթացքում առգրավվել է մոտ 20 կիլոգրամ կանեփի խեժ:

Սակայն գործը դրանով չի սահմանափակվել: Տանը նաեւ հայտնաբերվել է մեծ քանակությամբ շքեղության առարկաներ՝ դիզայներական հագուստ, որի ընդհանուր արժեքը մի քանի հարյուր հազար եվրո է, ինչպես նաեւ կանխիկ գումար: Բայց գլխավոր անակնկալը Պիկասոյի կտավն էր:

Le Parisien թերթի աղբյուրների տվյալներով, ստեղծագործությունն արդեն անցել է իսկության նախնական ստուգում: Քննիչները կարծում են, որ կտավը գողացվել է փարիզյան արվեստի գործերի պահոցներից մեկից: Նկարի անվանումը առայժմ չի հրապարակվում, սակայն դրա արժեքը գնահատվում է տասնյակ միլիոնավոր եվրոներ:

Գտածոյից հետո Կրետեյ քաղաքի դատախազությունը գողության եւ գողացված գույքը թաքցնելու հոդվածներով առանձին հետաքննություն է սկսել: Չորս մարդ թմրանյութերի ապօրինի շրջանառության գործով հանձնվել է դատարան: Սկզբում մամուլում ենթադրություններ էին առաջացել, թե խոսքը կարող է լինել «Կանաչ ոլոռով աղավնի» կտավի մասին, որը գողացվել էր 2010 թվականին Փարիզի Ժամանակակից արվեստի թանգարանի հանդուգն կողոպուտի ժամանակ: Սակայն այս վարկածը համարվում է քիչ հավանական:

Վարկածներից մեկի համաձայն, կասկածյալներից մեկն աշխատել է շքեղության առարկաների պահեստում եւ տարիների ընթացքում այնտեղից աստիճանաբար դուրս է բերել թանկարժեք իրեր: Քննիչների ենթադրությամբ, գողացված իրերի թվում եղել է նաեւ Պիկասոյի կտավը:

ԼՈՒՐԵՐ

ՓԱԹԵԹ

AEB Travel ճամփորդական փաթեթ. լավագույն ուղեւորությունների Ձեր պրեմիում այցեքարտը:

Ճամփորդական շրջանն իր լիակատար ընթացքի մեջ է: Եւ սա լավագույն պահն է ճամփորդական փաթեթ ձեռքբերելու համար: Հայէկոնոմբանկն իր պրեմիում քարտապաններին առաջարկում է AEB Travel ճամփորդական փաթեթ՝ նախատեսված նրանց համար, ովքեր արժեւորում են հարմարավետությունը, ապահովությունն ու արտոնյալ պայմանները:

Ո՞ւմ համար է Ճամփորդական փաթեթը: Փաթեթն այն հաճախորդների համար է, ովքեր ունեն կամ ձեռք կբերեն Հայէկոնոմբանկի VISA Platinum, VISA Infinite, VISA Guru Travel եւ Mastercard World քարտատեսակներից որեւէ մեկը:

Ի՞նչ արտոնություններ է տալիս AEB Travel-ը: Փաթեթի շրջանակում Դուք հնարավորություն կունենաք՝ Բանկում ձեռքբերել Սիլ ինշուրանսի ճանապարհորդության ապահովագրության պայմանագիր (TR Whole World AEB) 4000 դրամ արժեքով, ստանալ տեղեկանքներ հաշիվների բացման, սպասարկման եւ այլ ծառայությունների մասին 50% զեղչված արժեքով, Բանկում վարձակալել անհատական պահատեղեր (բացառությամբ Գլխամասային գրասենյակի)՝ 30% զեղչված սակագնով: արտոնյալ պայմաններով օգտվելԲանկի հետ համագործակցող տուրիստական ընկերությունների ծառայություններից: Նշված քարտերի ճամփորդական արտոնություններին (անվճար մուտքեր բիզնես սրահներ, Fast Track-ի հնարավորություն, 24/7 Concierge ծառայություն, ուղեբեռի անվճար փաթեթավորում եւ շատ ավելին) կարող եք ծանոթանալ Հայէկոնոմբանկի կայքէջում:

Ճամփորդե՛ք պրեմիում դասի հարմարավետությամբ եւ վայելե՛ք Ձեր ամառային հանգիստը Հայէկոնոմբանկի հետ:

86 86 | aeb.am

Հայէկոնոմբանկը վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից (Գ)

Ո՞Վ Է ՆԻՆԱ ԴԱՆԻԵԼԵՆ

Վերջին օրերին սոցիալական ցանցերում տարածվել են լուսանկարներ եւ կարճ տեսանյութեր, որոնցում երեւում է, որ UFC մարզիկ Արման Ծառուկյանը եւ մեդիա ինֆլուենսեր Նինա Դանիելեն - Հայաստանում են: Նրանց հրապարակումներից պարզ է դառնում, որ նրանք այցելել են Հայաստանի տարբեր գեղատեսիլ վայրերը: Նշենք, որ Ծառուկյանը եւ Նինան նաեւ մասնակցել են հայկական հարսանիքի, եւ հարսի պարի ժամանակ գումարներ են նվիրել հարսին: Նինա Դանիելեն (հայտնի նաեւ որպես Nina Drama) ամերիկացի մոդել, սոցցանցային ինֆլուենսեր եւ UFC/MMA հարցազրուցավար է: Վերջին շրջանում Արմանը եւ Նինան ակտիվ համագործակցում են եւ համատեղ հրապարակումներ են անում սոցիալական հարթակներում:

● Հ. Թումանյանի անվան ազգային տիկնիկային թատրոնում հունիսի 24-ին՝ ժամը 19:30-ին, կկայանա «Կոմիտասը» տիկնիկային ներկայացումը:

ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Կցանկանայի իմանալ, թե ինչպես կարելի է վերադարձնել կամ վերաձեւակերպել սխալ կամ ավել վճարված գումարները:

Հայկ Գասպարյան, 66 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. Եթե ՀՀ պետական բյուջեի գանձապետական հաշիվներին սխալ վճարում եք կատարել կամ ավելին եք վճարել, գումարի վերադարձման կամ վերաձեւակերպման նպատակով՝ կից դիմումի ձեւով, կարող եք դիմել ՀՀ ֆինանսների նախարարություն: Դիմումին կից ֆիզիկական կամ իրավաբանական անձը ներկայացնում է վճարումը հաստատող փաստաթղթերի բնօրինակները, մասնավորապես՝ անդորրագիրն ու վճարման հանձնարարագիրը: Եթե վճարումը կատարված է պետական վճարումների էլեկտրոնային համակարգի միջոցով, ապա որպես վճարումը հաստատող փաստաթուղթ կարող է հանդիսանալ վճարումների պետական էլեկտրոնային համակարգի գեներացված անդորրագիրը կամ անդորրագրի 20-նիշանոց ծածկագիրը, ինչպես նաեւ վճարված գումարը վերադարձնելու հանգամանքների հիմնավորման մասին գանձող մարմնի տեղեկանքը: Եթե չգիտեք, թե որ մարմինն է գանձում կատարել, ապա անհրաժեշտ է մուտք գործել կայքի գանձապետական հաշիվներ բաժինը, գտնել համապատասխան հաշվեհամարը, որին կից նշված է նաեւ հաշիվը տնօրինող մարմնի անվանումը:

Եթե դիմումը ներկայացվում է լիազորված անձի կողմից, ապա վերադարձը կամ վերաձեւակերպումը հիմնավորող փաստաթղթերի հետ միասին անհրաժեշտ է ներկայացնել նաեւ նոտարի կողմից վավերացված լիազորագիրը:

Եթե վերադարձման ենթակա գումարները վճարված են անչափահաս երեխաների անունով, ապա դիմումը ներկայացվում է ծնողներից մեկի անունով, իսկ վերադարձը հիմնավորող փաստաթղթերի հետ տրամադրվում են նաեւ ծննդյան վկայականների պատճենները:

Վերադարձման դեպքում դիմումում պետք է նշել նաեւ բանկային ռեկվիզիտները, այսինքն՝ այն բանկի եւ մասնաճյուղի անունը, որտեղից դիմողը պետք է ստանա վերադարձված գումարը եւ անձնագրի տվյալները/սերիան, ում կողմից է տրված, պատճենը/: Բանկային հաշվեհամարի առկայության դեպքում անձնագրի տվյալների ներկայացումը պարտադիր չէ:

Վերաձեւակերպման դեպքում դիմումի մեջ պետք է նշել ճիշտ գանձապետական հաշվի համարը: Վերոնշյալ փաստաթղթերի առկայության դեպքում դիմողը 5-օրյա ժամկետում տեղեկացվում է գործարքը /գումարի վերադարձ կամ վերաձեւակերպում/ կատարված լինելու մասին:

Լրացուցիչ հարցերի դեպքում զանգահարել՝ 060 700-273 հեռախոսահամարով:

ՀՀ ֆինանսների նախարարություն

Էջը՝ ՄԱՐԻԱՆՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Ի՞նչ է անհրաժեշտ ՀՀ ազգային անվտանգության ծառայությունում գրավոր տարբերակով դիմումի ներկայացման համար:

Գուրգեն Սարգսյան, 74 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. Ֆիզիկական, իրավաբանական անձանցից ՀՀ ազգային անվտանգության ծառայությունում (այսուհետ՝ Ծառայություն) ստացված, ինչպես նաեւ պետական այլ մարմիններից վերահասցեագրված դիմումները պետք է լինեն գրավոր եւ պարունակեն.

1) Ծառայության անվանումը (հստակ երեւա, որ դիմումը հասցեագրված է Ծառայությանը),

2) դիմողի անունը, ազգանունը, իրավաբանական անձի լրիվ անվանումը,

3) դիմողի հասցեն, իրավաբանական անձի գտնվելու վայրը,

4) առարկան՝ դիմումով բարձրացված հարցերը, ներկայացված պահանջը (խնդրանքը),

5) կազմման տարին, ամիսը, ամսաթիվը,

6) ֆիզիկական անձի կամ իրավաբանական անձի իրավասու պաշտոնատար անձի ստորագրությունը («Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի հոդված 31):

Դիմումին կցվում են անհրաժեշտ փաստաթղթերը (եթե այդպիսիք առկա են), իսկ եթե դիմումը ներկայացվում է ֆիզիկական կամ իրավաբանական անձի ներկայացուցչի կողմից, ապա դիմումին կից պետք է ներկայացվի նաեւ օրենքով սահմանված կարգով ներկայացուցչին տրված լիազորագիրը («Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի հոդված 31):

ՀՀ ազգային անվտանգության ծառայություն

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ Գագիկ Շամշյանի

Ողբերգական ավտովթար Արագածոտնի մարզում. ճակատ ճակատի բախվել են «Chevrolet Volt»-ը եւ «Opel»-ը. կա 1 զոհ, 6 վիրավոր:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-53-01

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը:
Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

	Շիրակ	+ 9 + 14 + 21 + 26
	Կոտայքի լեռներ	+ 7 + 12 + 21 + 25
	Կոտայքի նախալեռներ	+ 15 + 18 + 27 + 30
	Գեղարքունիք	+ 9 + 14 + 18 + 23
	Լոռի	+ 10 + 15 + 18 + 22
	Տավուշ	+ 11 + 15 + 20 + 24
	Արագածոտնի լեռներ	+ 7 + 11 + 19 + 24
	Արագածոտնի նախալեռներ	+ 14 + 19 + 26 + 31

	Արարատ	+ 15 + 19 + 30 + 33
	Արմավիր	+ 15 + 19 + 31 + 34
	Վայոց ձորի լեռներ	+ 9 + 12 + 20 + 24
	Վայոց ձորի նախալեռներ	+ 17 + 20 + 30 + 34
	Սյունիքի լեռներ	+ 8 + 11 + 16 + 20
	Սյունիքի նախալեռներ	+ 11 + 15 + 21 + 24
	Սյունիքի հովիտներ	+ 17 + 21 + 27 + 31
	Երեւան	+ 17 + 19 + 31 + 33

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **22.06.2026**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*